

IMRE MADACH

ՄԱՐԴՈՒՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

(Շար. տե'ս «Բազմալեզ» 1966, ք. 4-6, էջ 117-123)

ՏԵՍԻԼ Բ.

Դրախտին մէջ: Մէջտեղը՝ Գիտութեան եւ Կեանքի ծառերը: Առաջ կու գան Ադամ եւ Եւա. ամէն տեսակ անասուններ, հեղ ընտանութեամբ, կը շարժապատեն զիրենք: Երկնքի նեղֆուածքէն՝ փառքի նախանշ մը կ'իջնէ. կը լըսուի հրեշտակներու մեղմաձայն խմբերգը: Կը շողշողայ լուսաւոր օրը:

ԵԻԱ

Ապրիլ, ապրիլ, ո՛հ, ի՛նչ քաղցր է եւ չքնաղ:

ԱԴԱՄ

Եւ համօրէն բնութեան վըրայ աէր ըլլալ:

ԵԻԱ

Ըզգալ թէ մենք հողն ուրիշին կը վայլենք,
Եւ փոխան լոկ կը թոթովենք դո՛հութիւն՝
Այս հաճոյքներն ու խինդը մեզ տընդին:

ԱԴԱՄ

Կը տեսնեմ թէ ենթարկուին է քեզ համար
Իբր ըսկըզբունք կեանքիդ առջեւ պարզեւած:
Ծարաւի եմ, Եւա՛, տե՛ս, ի՛նչ հրապուրիչ
Նայուածք մ'ունին պըտուղներն այս դէպի մեզ:

ԵԻԱ

Քեզի համար հատ մը պիտի վըրցընեմ:

ՏԻՐՈՋ ՁԱՅՆԸ

Կեցի՛ր, կեցի՛ր: Երկիրն ամբողջ քեզ տըւի
Լոկ այս երկու ծառերէն խոյս տուր, Ադամ,
Իրենց պըտուղն ողի մ'ուրիշ կը պահէ՝
Եւ զայն վայրոյն պիտի մեռնի անխափան:
Հո՛ն ուր կարմիր են ողկոյցներն խաղողին,
Ըստուեր մ'այնտեղ կը պարզեւէ քեզ հանգիստ՝
Ձընաշխարհիկ այս տօթակէզ կէսօրին:

ԱԴԱՄ

Ջարմանակի՛ հրաման, բայց լուրջ կը թըւի:

ԵԻԱ

Ինչո՞ւ երկու ծառերն այս չատ աւելի
Գեղեցիկ են դրախտի բոլոր ծառերէն.
Եւ կամ ինչո՞ւ ասոնք են լոկ արդիւրեւած:

ԱԴԱՄ

Ուրեմն, ինչո՞ւ եւ երկիրն է ամաղուռ,
Եւ պուրակներն ինչո՞ւ կանանչ պիտ'ըլլան:
Գոհ ըլլանք մենք եղածներէն: Պատուէրին
Հընազանդի՛նք. Եւա՛, ինծի հետեւէ:

(Կը նստին սարսիկնայի մը տակ)

ԵԻԱ

Կուրծքիս հակէ, հովահարեմ ես քեզի:

(Սաստիկ հով մը. Արուսեակ, սաղարթներու մէջ, կ'երեւի)

ԱԴԱՄ

Ո՛հ, կին, ի՛նչ է, նրման բան դեռ չեմ լըսած.
Օտարոտի, թշնամի ոյժ մը, կարծես,
Մեր վրայ կ'իջնէ խոյանալէն:

ԵԻԱ

Կը սարսիմ:

Լըռեց նաեւ դաշնակութիւնն երկնային:

ԱԴԱՄ

Հոս, կուրծքիդ վրայ, դեռ զայն կարծես կը լըսեմ:

ԵԻԱ

Հոն վերն՝ եթէ չողն այդ փառքին խաւարի,
Հոս վարն, Ադամ, աչքերուդ մէջ կը զըտնեմ:
Ո՛ւր պիտի զայն ես զըտնէի քեզմէ դուրս,
Որուն ջերմին տենչն ինձ տըւաւ դոյութիւն.
Ինչպէս արիւն իր լուսեղէն ծովին մէջ՝
Որ չըմընայ տիեզերքին մէջ լըքուած,
Կը նըկարէ ինքզինք երե՛սը ջուրին,
Ու քընքշանքով կը փայփայէ դանդիկա,
Եւ կը հըրճուի իրրեւ ընկեր մը զըտած,

Վեհանձնօրէն մոռնալով թէ այն է լոկ
Տըժգոյն պատկերն իր հարազատ կըրակին,
Որ իրեն հետ թշննան մէջ պիտի հանդէր:

Ա.ԴԱՄ

Մի՛ դուն աղպէս, եւա, դու զիս մի՛ շիկնէր:
Ձայնը ի՞նչ է, եթէ չըլլար զայն լըսող.
Շողն ի՞նչ պիտի ըլլար առանց երանդի.
Եւ ես ալ ի՞նչ, եթէ նրման ծաղիկին
Կամ լեռներու արձաղանդին հանդուհալ՝
Քու անձիդ մէջ էութիւնն իմ չըրացուէր,
Նոր ու չըքեղ, ուր ես կըրնամ զիս սիրել:

ԱՐՈՒՍԵԱԿ

Փաղաքանքներն այս մեղի ինչո՞ւ կը լըսեմ.
Անդին դառնամ, որ չըստիպուիմ ամբնալ,
Որ իմ հաշուող եւ ստոնաչունչ միտքս անդամ՝
Նախանձ չզգայ զգացումներու մանկական:
(Մօտակայ ցիւղի մը վրայ՝ քնչնիկ մը կը սկսի երգել)

ԵԻԱ

Լըսէ՛, Ագամ, ըսէ՛, արդեօք կ'ըմբռնե՞ս
Երգը սիրոյ այս միամիտ թռչնիկին:

Ա.ԴԱՄ

Կ'ունկընդդէի ես առուակի խոխոջին,
Եւ կը թըւի, ան ալ այս նոյն երգն ունէր:

ԵԻԱ

Ի՞նչ սիրալի համերգ է այս, սիրելիս,
Անթիւ ձայներ՝ որոնք ունին մէկ իմաստ:

ԱՐՈՒՍԵԱԿ

Ինչո՞ւ այսքան կը դանդաղիմ. օ՛ն, դործի՛:
Երգընցած եմ կորուստն անոնց. թող կորչի՛ն:
Սակայն դարձեալ կեցած եմ հոս վարանոտ,
Պիտի չըլլա՞յ պայքարս ունայն՝ զխուրթեան
Եւ սիւղութեան զէնուղարգով հրապուրիչ,
Ընդդէմ անոնց՝ որոնք իբրեւ ապաստան
Ձգացումն ունին, սրտապնդիչ զօրավիզ,
Նըւաղումէն եւ անկումէն կանգնելու:
Ինչո՞ւ տանջեմ ուղեղս: Յանդուգն է յաղթող:

(Դարձեալ հովի ուժգին փշուժ մը: Արուսեակ կ'երեւի ապշահար գոյգին:
Փառքի նախանշը կը մթագնի: Արուսեակ կը քրքայ)

Ինչո՞ւ կ'ապշիք:

(Եւայիմ, որ փախչի կ'ուզէ)

Ո՛հ, կեցի՛ր, կին գեղանի...

Պահ մը թոյլ տուր ըզմայլելու քու վըրադ:

(Եւա կանգ կ'առնէ եւ կամաց կամաց քաշուքիւն կը գգայ)

(Մեկուսի) Նախատիպն այս պիտի կրկնեն բիւր անգամ:
(Բարձրաձայն) Կը վախնա՞ս դու, Ագամ...

Ա.ԴԱՄ

Քեզմէ՞, հէ՛զ տեսիլ:

ԱՐՈՒՍԵԱԿ

(Մեկուսի) Այս ալ յարմար նախահայր մ'է սէզ մարդուն:
(Բարձրաձայն) Ողջո՞յն, եղբայր:

Ա.ԴԱՄ

Օ՛ն, ըսէ՛ մեզ, դուն ո՞վ ես.

Վերէ՞ն կու գաս մեզի՝ եթէ վարերէն:

ԱՐՈՒՍԵԱԿ

Ինչպէս կ'ուզես. մեզի համար նոյն բանն է:

Ա.ԴԱՄ

Ձէի գիտեր որ մեզմէ դուրս դեռ մարդ կայ:

ԱՐՈՒՍԵԱԿ

Ո՛հ, տակաւին շատ բան կայ որ չես գիտեր:
Ու միշտ պիտի անդիտանաս: Կը կարծե՞ս
Որ ալեւորն այն հեղ ըզքեզ ըստեղծեց՝
Քեզ հետ մէկտեղ աշխարհը այս բաժնելու:
Դու գինք կ'օրհնես, եւ նա ըզքեզ կը պահէ,
Ա՛ռ ասիկա, կ'ըսէ, վախցի՛ր այդ միւսէն.
Քեզ կը հովուէ զերդ անասուն զեղմնարարձ.
Եւ գիտակից ըլլալու հարկ չես ըզդար:

Ա.ԴԱՄ

Ես գիտակից: Եւ գիտակից չեմ արդեօք,
Ձեմ ըզդար ես արեգակին շողն օրհնեալ,
Եւ գոյութեան հրճուանքն անոյշ, եւ անհուն
Ձըրիատուր պարզեանին իմ Աստուծոյս,
Որ զիս ըրաւ տէր եւ աստուած այս երկրին:

ԱՐՈՒՍԵԱԿ

Թերեւս այսպէս տրամաբանէ՝ հէզ որդն ալ՝
 Որ կը կըրժէ պտուղն երբ դեռ չես վայրած,
 Եւ արծիւն ալ՝ թռչնիկին վրայ խոյացող:
 Ի՞նչ ունիս դու անոնցմէ բարձր ըլլալու.
 Կայծ մը կայ լոկ՝ որ հողուոյ մէջ կը շողայ,
 Թեթեւ շարժում մը դորութեան անսահման,
 Որ քեզ կ'ընէ կոհակներու պէս առուին,
 Որոնք վայրկեան մը կը շողան ու կ'իյնան
 Հասարակաց եւ դորշաթոյր հունին մէջ:
 Այո՛, դու բան մ'ունիս թերեւս. մտածութիւն,
 Որ կը պըլպըլայ անդիտակից կուրծքիդ տակ.
 Աս է որ քեզ պիտի դարձնէ չափահաս,
 Եւ դուն ազատ, վըստահացած ոյժերուդ,
 Բարեւոյն միջեւ եւ կամ չարին պիտ' ընտրես,
 Ու դուն քեզմէ ճակատագիրըդ կերտես,
 Ազատելով խընամոզէն հողածու:
 Բայց դուն թերեւս հանդոյն բղէղին նախընտրես
 Այբերու եղկ ոլորտիդ մէջ սընանիւ,
 Տըղիտութեամբ կեանքըդ հակիրճ ըստառել:
 Դիւրին բան է հաւատքի վրայ կըռթընիւ.
 Թէպէտ դըժուար, բայց աւելի վըսեմ է
 Որ ինքնիրեն կանգնած կենանք մենք ոտքի:

Ա.Դ.ԱՄ

Այդ քու խօսքերդ զըլխու պըտոյտ ինձ կու տան:

ԵԻԱ

Խանդ կու տան ինձ՝ նոր եւ չըքնաղ ըսածներդ:

ԱՐՈՒՍԵԱԿ

Բայց դիտութիւնը դեռ պիտի չըբաւէր
 Իրազորձեւ մեծ ու վըսեմ արարքներ.
 Անմահութիւնն անոր պէտք է միանայ:
 Մէկ թըղաչափ կեանքն ի՞նչ կարող է ընել:
 Ծառերն այս դոյզ կը ծածկեն մէկ եւ միւս ոյժն.
 Եւ արարիչն ասոնք ձեզի արդիւնց:
 Թէ մէկն ուտես՝ պիտ' ունենաս դերդ Աստուած,
 Դուն դիտութիւն. իսկ այն միւսէն թէ ուտես՝
 Երկտասարդ պիտի մընայ դեզդ յաւերժ:

ԵԻԱ

Ուրեմն ի՞նչքան մեր արարիչն անգութ է:

Ա.Դ.ԱՄ

Բայց թէ խաբէ՞ս:

(Փառքի ֆանանչը քիչ մը կը բացուի)

ԵՐԿՆԱՅԻՆ ՊԱՐԸ

Վա՛յ, քեզ, վա՛յ, քեզ, ո՛վ աշխարհ:
 Քեզ կը փորձէ դրուժան ոգին վաղեմի:

ՏԻՐՈՋ ԶԱՅՆԸ

Ո՛վ մարդ, ըզդո՛յ՜...

Ա.Դ.ԱՄ

Այս ի՞նչ ձայն է վերըստին:

ԱՐՈՒՍԵԱԿ

Քամին է, որ բարունակներ կը շարժէ:
 Օգնեցէ՛ք ինձ,
 Դուք, ո՛վ տարբեր,
 Մարդը ձեզի
 Ենթարկել:

(Հովի հարուստ մը, փառքի ֆանանչը կը ծածկուի)
 Ծառերն այս դոյզ կը պատկանին լոկ ինձի:

Ա.Դ.ԱՄ

Բայց դուն ո՛վ ես, մինչ մեզ նըման կը թուխս:

ԱՐՈՒՍԵԱԿ

Ամպստըլաց արծիւը տես, հոն, վերեւ,
 Տե՛ս, հողին մէջ, խըլուրդը որ կը պեղէ,
 Այդ երկուքն ալ ունին տարբեր հորիզոն:
 Ոգիներու աշխարհն է դուրս քու ծիրէդ:
 Ու քեզ համար՝ մարդ էակն է դերադոյն:
 Շան համար ալ շունն է վերին դադափար,
 Քեզ կը պատուէ թէ դերդ ընկեր ընդունիս:
 Բայց ինչպէս դու՝ շանն արհամարհ կը նայիս
 Վերէն, եւ իր ճակատագրին կը տիրես,
 Աստուծոյ պէս օրհնութիւններ բաշխելով,
 Եւ կամ անէծք: Այսպէս ալ մենք ձեր վըրայ
 Կը դարձընենք ակնարկը մեր բարձունքէն,
 Մասնակիցներս ոգիներու աշխարհին:

Ա.ԴԱՄ

Անոնյմէ մէ՞կն, ուրեմըն, ես նաեւ դուն:

ԱՐՈՒՍԵԱԿ

Զօրութեանց մէջ հըղօրադոյն եմ, այո՛,
Կանոնած էի մօտը Տիրոջ զահոյքին,
Ու մասնակից՝ ճաճանչադեղ իր փառքին:

Ա.ԴԱՄ

Ուրեմն, ինչո՞ւ չըմբռնացիր լոյս երկինքն,
Ինչո՞ւ իջար հոս մեր աշխարհն հողեղէն:

ԱՐՈՒՍԵԱԿ

Ա՛լ ճանճրացայ, հոն, երկրորդ տեղ զբաւելով,
Ու համաչափ եւ միակերպ կենցաղէն,
Եւ երկնային խմբերդներէն մանկական,
Որ միշտ զովք է եւ թերութիւն չի ճանչնար:
Կը սիրեմ ես աննեղաշնակն ու պայքարն,
Որ կը ստեղծէ նոր զօրութիւն, նոր աշխարհ,
Ուր որ հողին ինքնին կրնայ մեծ ըլլալ,
Եւ ուր քաջերն կրնան ինծի հետեւիլ:

Ա.ԴԱՄ

Աստուած մեզի մեծ պատուհաս ըսպառնաց,
Թէ ա՛յլ ճամբայ ընտրենք իրեն զըծածէն:

ԵԻԱ

Ինչո՞ւ ըզմեղ պիտի պատժէ. թէ ուղին
Գըծեց որուն վրայէն կ'ուղէ որ քալենք,
Միանգամայն այնպէս մը մեղ ըստեղծեց՝
Որ չըջեղեն մեղանշական հակումներ:
Կամ թէ ինչո՞ւ դըրաւ մեղ խոր վիհին վրայ,
Գըլխապըտոյտ, եւ կորուստի սահմանուած:
Իսկ թէ մեղքն ալ մասն է իրեն ծըրադրին,
Զերդ փոթորիկն՝ օրերուն մէջ արեւոտ,
Ո՞վ պիտ'ըսէ՝ թէ փոթորիկն որոտուն
Յանցաւոր է, քան թէ արփին կենսատու:

ԱՐՈՒՍԵԱԿ

Ահաւասիկ իմաստասէրն առաջին:
Զըքնաղ քոյրիկ, պիտ' հետեւին քեզ շատեր,
Որ հաղար կերպ պիտի վիճեն խընդիրն այս:

Շատեր պիտի յիմարանոց վերջանան,
Շատեր առանց նաւահանգիստ հասնելու՝
Դէպի ետեւ պիտ' ընկըրկին ապշահար:
Ուրեմն, դուք ուղեղնիդ շատ մի՛ տանջէք:
Ամէն մէկ բան ունի հաղար երեւոյթ,
Եւ այդ ամէնն ով որ ուղէ նըկատել՝
Երբեք պիտի բան մ'աւելի չըզիտնայ
Իր զիտցածէն. եւ ոչ լուծման պիտ' հասնի:
Տրամարանին է գործին միշտ մահարեր:

ԵԻԱ

Կը քաղեմ ես հատ մ'ուրեմն այդ պըտուղէն:

Ա.ԴԱՄ

Տիրոջ անէծքն է անոր վրայ:

(Արուսեակ կը քրքայ)

Բայց փրցո՛ւր:

Թող պատահի՝ ինչ որ պիտի պատահի.

Աստուծոյ պէս մենք իմաստուն թող դառնանք:

(Նախ եւս, ապա Ադամ կը փախկեն Գիտութեան ծառին պտուղէն)

ԵԻԱ

Եւ աւելի՛ն, երիտասարդ յաւիտեան:

ԱՐՈՒՍԵԱԿ

Եկէ՛ք, Եկէ՛ք. անմահութեան ծառն է աս:

Փութացէ՛ք, շուտ:

(Զիրենգ դէպի միւս ծառ կը քաշէ: Քերորէ մը,
բոցեղէն սուրով, իրենց փախան կը կտրէ)

ՔԵՐՈՐԵՆ

Մեղաւորնե՛ր, հեռացէ՛ք:

ՏԻՐՈՋ ԶԱՅՆԸ

Ադամ, Ադամ. դիտ թողուցիր, ես ալ քեզ
Կը լըքեմ արդ, տես ի՞նչ կ'արժէս ինքնիրենդ:

ԵԻԱ

Ա՛յս, վերջացա՛նք...

ԱՐՈՒՍԵԱԿ

Կը վըհատի՞ք:

Ա.ԴԱՄ

Մի՛ կարծեր:

Լոկ զարթոնքի սարսուռը զիս պատեր է:
Հեռո՛ւ ասկից, ուր ալ բլլայ, ո՛վ կին իմ:
Այլեւս օտար եւ ամայի է այս վայր:

ԵՐԿՆԱՅԻՆ ՊԱՐԸ

Արտասուեցէ՛ք եզրայրական արցունքով,
Կը յաղթէ սուտն. — ահա երկի՛րը կորաւ:

(Շար. 2)

Հունգար բնագրէն քարգմանեց

Հ. ԱՆԴՐԵԱՍ ՖՈԿՈԼԵԱՆ

ՍԻՐՈՅ ԼԱՐ

Տիեզերքի մեծ քնարին
Երգերն անոյշ լըսեցի.
Սրտի, մտքի բոլոր լարերն,
Յոյսի լոյսով զննեցի:

Բայց, աւա՛ղ, այդ մեծ քնարէն
Լար մը փրքեր է հիւսա.
Սիրոյ լարն է, որ ջինջ երգով
Այ չի՛ հնչեր երկրիս վրայ:

Հ. ԵՓՐԵՄ ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ



ՆԿԱՐԻՉ Զ. ՍԱՆԹՈՄԱՉՈՅ

Վենետիկի Գեղարուեստից Կաճառին
գլխավոր ուսուցիչ եւ աշխարհահռչակ
նկարիչ՝ Giuseppe Santomaso, այս աշ-
նան, Ս. Ղազար այցելեց:

Միջազգային համբաւի տիրացած այս
նկարիչը, որուն աշակերտած են եւ կ'ա-
շակերտին հայ նկարիչներ՝ Սուրէն Երե-
ցեան, Լեւոն Ժամկոչեան, Ալեքսան Պէ-
րէճիքեան, ծնած է Վենետիկ, 1907ին:
Յաճախած է Վենետիկի Գեղարուեստից
Կաճառը՝ զոր մեծ յաջողութեամբ աւար-
տելէ ետք, 1937ին ի վեր, անձնական՝ ան-
թիւ ցուցահանդէսներ կազմակերպած է
Եւրոպայի, Հիւսիսային եւ հարաւային
Ամերիկաներու գլխավոր կեդրոններու
մէջ: Մասնակցելով միջազգային հաւա-
քական ցուցահանդէսներու, արժէքաւոր
մրցանակներ շահած է, մասնաւորապէս
1954ին՝ Վենետիկի նշանաւոր երկամեայ

(Biennale) ցուցահանդէսին, մեծ նկա-
րիչի եւ մասնաւորապէս վարպետ զարդա-
նկարիչի (décorateur) անուն մը ապահո-
վելով: Իր նկարները փայլուն տեղ մը
գրաւած են աշխարհիս քառնեւերեք մեծ
քաղաքներու թանգարաններուն մէջ:

Սանթոմաչոյ առաւելապէս մշակած է
վերացական նկարչութիւնը: Հետեւելով
Kandinskyի բացած ուղիին, անիկա՝ վե-
նետիկեան արդի նկարչութեան մէջ կա-
տարած է այն դերը, որ Joan Miró
ըրած է սպանիականին մէջ:

Մեր մտերիմ տեսակցութեան ընթաց-
քին, Սանթոմաչոյ, որ հակառակ իր
համբաւաւոր մէկը ըլլալուն, վերջին առ-
տիճան համեզտ է եւ համակրելի, խան-
գավառ չեղտով, գրեթէ վերացած, սկը-
սաւ պարզել նկարչութեան մասին ունե-
ցած իր զաղափարները: